

ԹԻԼ 25981

Օգոստոս 15, 1978

Մեծայարգ
Տիար Արմէն Քիւրճեան
Թորոնթօ.

Յարգելի Տիար Քիւրճեան,

Թորոնթոյի մեր համայնքին մէջ երկրորդ ծուխ մը հաստատելու աշխատանքներու կապակցութեամբ՝ հրահանգած ենք որ Առաջնորդի Փոխանորդ եւ Թեմական Խորհուրդի փոխ-նախագահ Ն. Տ. Յուսիկ Ծ. Վրդ. Պաղտասեանի նախագահութեամբ խորհրդակցական ժողով մը զումարուի Երեքշաբթի Օգոստոս 29, 1978, երեկոյեան ժամը 8.00ին՝ Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ սրահին մէջ: Սոյն ժողովին հրաւիրած ենք Եկեղեցւոյ Թեմական Խորհուրդը եւ համայնքիս օգտաշատ ազգայիններէն մի քանի անձեր:

Այսու գիրով կը հրաւիրենք ձեզ մասնակցելու սոյն ժողովին, որուն զլիակար օրակարգը պիտի ըլլայ ծրագրուած օրինական այն քայլերուն որոնք պիտի առնուին Առաջնորդի եւ Թեմական Խորհուրդի հաւանութեամբ, կազմակերպելու համար երկրորդ ծուխ մը Թորոնթոյի մեր համայնքին մէջ:

Յը յուսանք որ նկատի ունենալով վերոյիշեալ թուականը ներկայ կը գտնուիք ժողովին, ձեր օգտակար թեւադրութիւնները բերելու խորհրդակցութեանց:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐՊՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ